

աշխարհիկ լեզուի վերլուծական կազմութիւնը կը յառաջագայէր թաթար լեզուին ազդեցութենէն: Իսկ Աբուլեան՝ որ վեց լեզու գիտէր, կը պնդէր թէ զրաբար լեզուն այնչափ գոմարին է՝ որ կարող չէր զիւրութեամբ խօսել զայն, թէպէտ և սորված էր զքերականութիւն, ու քսնի մը մատենագրաց ամբողջ գրքերն ի բերան սերտած: Հակաթաւան շմոցաւ նաև զհայկական folk-lore, ի վերջ առաջնոյ հատորոյն զնելով (318—335), այլ և այլ ժողովրդական զրոյցներ (légendes) Աբուլեանի թարգմանութեամբ: Երանօթ է արդէն թէ ինչպէս այս համակերլի անձն անհետացաւ ի 1848, և ոչ ոք կրցաւ իմանալ թէ ի՞նչ եղաւ իրեն. սակայն իր յիշատակը միշտ սիրելի եղած է և պիտի բլլայ թէ՛ ազգայնոց և թէ՛ եւրոպացի հայագիտաց, և որոյ համար այս տարի (1893) Ռուսահայք կ'աշխատին յիշատակարան մի կանգնել:

Այն ճանապարհորդաց, որոց վրայ պիտի սկսինք խօսիլ, մեզի տուած և գրով աւանդած տեղեկութիւնք պէտք է ուսումնասիրուին անոնցմէ՝ որ կը փափաքին տեղեկութիւն ունենալ Հայոց քաղաքական և ընկերական վիճակին վրայ, և որոյ ծանօթութիւնն անհրաժեշտ հարկաւոր է յուսումն իրենց պատմութեան և մատենագրութեան: Անոնցմով լիուլի կ'արդարանայ իրենց զարմանքն այն ժողովրդեան վրայ, որ « յանյիշատակ ժամանակաց բնակութիւն հաստատեր է ի մերձակայս նուիրական լերինն Նոյի, և որ քրիստոսական կրօնից յայտնուելէն ետքը՝ օտար և թշնամի ժողովրդոց մէջ հաստատուն մնացեր է Արարատայ չորս կողմը, իբրև ի վերայ անտեղիտալի վիմի հաւատոց Գրիստոսի, և յորմէ երբէք օտարացած չէ » (Պարբոզ, Ա. 102):

Շարունակելի

## ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ազգային և օտար բամասիրութիւն՝ տարիներէ ի վեր, մեր պատմութեամ տեսակիտով մեծ կարեւորութիւն ունեցող խնդրովս զբաղած է և դեռ եւս կը զբաղի, ինչպէս ծանօթ է ըմթերցողաց: Յօժարավոր լը հրատարակեմք խմբագրութեամս ուղղուած այս մոր գրութիւնն ալ, որ հետաքննական տեսութեամբք և հմուտ ոճովն ու տեղեկութեամբք մեծապէս օգտակար կըմայ ըլլալ բամասիրաց: Հրատարակած ատենմին՝ աւելորդ կը սեպեմք յայտարարել, թէ բամբրում հեղինակին, Նազարեթեամ Ս. Վարդապետին կը մնայ՝ ամենայն պատասխանատուութիւն իր կարծեանցը եւ եմթաղրութեամց:

**Ս**ՈՒՐԲ և անսուրբ, արի և անարի, ընտասուն և վայրենի, համբոյր և վայրազ, խրոխտ և սէգ, հմայիչ և հրապուրիչ աբիական սերման զարմանալի մի մասն երևի Հայ ժողովուրդն, մինչ հազիւ մարդկային ընկերութիւնն կը խմբէր յաշխարհիս:

Եւրոպական հնախոյզ գիտութեան խորակրկիտ ձեռք՝ պարզած են ընդհանուր աշխարհի աչաց առաջ այս պարզ և ընդարձակ գաղափարն, թէ Հայ աշխարհ հնդեւրոպական գծին առաջին քայլերէն է դէպ յԵւրոպիա, Հայ լեզու ծնող է այդ գծէն ոմանց. հետեւաբար՝ ՚ի մարց և ՚ի ծնողաց հնդեւրոպական հորիզոնին :

Գիտութիւնն և ժամանակ պիտի պարզեն մեզ զայդ բացայայտ վարդապետութեամբ՝ օր մը. այն ատեն պիտի տեսնեմք շօտփական համոզմամբ՝ թէ այդ հսկայական գծին միակ Մայրն և ծնող Հայ աշխարհն է, կեդրոնավայր առհասարակ բաժանմանց դէպ ՚ի Հնդիկս և դէպ յԵւրոպիայ, ՚ի հիւսիս և ՚ի հարաւ. միակ և նախկին քայլ և կեդրոն. Այդ օր պիտի պարզէ մեզ միանգամայն՝ Հայ լեզուի սեպհական ծնօղն և ծնունդն, և սորա լեզուական և ազգային գաղթականութիւնը. — Առ այս մեք կը կանխեմք, այսու համոզմամբ՝ թէ զաւակաց անծանօթութիւն՝ մօր մայրութիւնը չի ժխտեր. —

Վերջին օրերս Ակրամի Աւստրէհունգար թանգարանի մէջ գտնուած մումիայն՝ զոր տեսնելու բազդն ունեցայ անցեալ տարի, շատ գիտնականաց տարօրինակ կարծեաց պատճառ եղաւ, որոյ նկատմամբ խօսելով հմուտ բանասէրն Կ. էֆ. Պասմաճեան Արևելքի (1892 թ. 2204) և Հանդ. Ամսօրեայ (1892 թ. 4. էջ 101) մէջ, կարծիք կը յայտնէր և իրաւամբ կը ջանար հետեցունել՝ թէ Ետրուսկերէնն՝ Տիւրսենեան գաղութի լեզուն՝ որով գրուած են վերոյիշեալ մումիայի երէզքն, ծնունդ է հայերէնի : Գէթ այդպէս կը յուսար վերջնական վճիռն լսել եւրոպական հնախուզութենէն :

Հանդէս ամսօրեայ (թիւ 5) Սոֆուս Բուգգէի մի նամակն հրատարակելով՝ կ'ըսէ. « Ետրուսկերէնն շատ մերձակայ է հայ լեզուի, մանաւանդ թէ կրնայ հին հայերէնի շատ տարբերող մի գաւառաբարբառն համարուիլ, կը յուսամ որ այս կարծիքս մումիայի երէզներու վրայի արձանագրութեամբն անժխտելի կերպով պիտի ապացուցուի » : — Ահա Պասմաճեան էֆ. վարդապետութեան արձագանգն :

Եւ արդեօք վերոյգրեալ « հին հայերէնն » գտնելու համար՝ մինչև ո՞ր գար յառաջանալու եմք. Քրիստոսէ 10 կամ 11 դար առաջ Տիւրսենեանք կը գաղթեն յիտալիա. սակայն քանի՞ տասնեակ դարեր յառաջ ենթագրելու եմք նոցա գաղութն ՚ի Հայոց աշխարհէն : Վեց տարիներ առաջ կարծիք մ'էր ետրուսկերէնի հնդեւրոպական լեզուաց կարգէն ըլլայն. նոյն անձն որ այսօր հայերէնի գաւառաբարբառն լինել կը հաստատէ զտիւրսենեանն՝ յայնժամ կը գրէր. — « Ետրուսկերէնն հնդեւրոպական լեզու

մի պէտք է լինի » : (Stu Sophus Bugge, Comm. de M. Michel Bréal, Acad. des Ins. 4 Juin 1886) : — *Իսկ J. Martha (Stu L'Arch. étr. et rom., p. 8) խօսելով Ետրուսկացւոց ծագման վրայ, Հերոդոտեայ և Դիոնիսիոս Ալիկառնացւոյ վկայութիւնքն բերելով հանդերձ՝ կը յաւելու. « Cependant nul n'a réussi à percer les brouillards où se perd le passé de ce peuple énigmatique ».*

Եւ ահա եւրոպական հետազոտութիւնն՝ մանրակրկիտ խժբը-ծանքն՝ և այդ առեղծուածն կը պարզէ մեր առաջ և 'ի նպաստ մեր Ազգին : Ուստի Տիւրսենեան գաղութն 10 և 11 դարեր յառաջ քան զՔրիստոս՝ ըստ Հերոդոտեաժ՝ ծովու ճանապարհաւ անցած է յիտալիա. այսու իտալիոյ կազմակերպութեան առաջին օրերուն կը հասնիմք : Սակայն թէ քանի՛ դարեր յառաջ Տիւրսենեան գաղթականութիւնն մեկնելով 'ի Հայոց բնավայրէն՝ գացեր հաստատուեր է 'ի Լիւդիա, և թէ ո՛րչափ մնացեր է անդ, հնախօսութիւնն չի պարզեր մեզ դեռ ևս :

Ենթադրելով 20 դարն . ք. զՔրիստոս, կը հանդիպիմք Հընդիկ-Արիական երկրորդ գաղթականութեան կրկին գարձին դէպ յարեմուտս 'ի Հնդկաստանէ, այսինքն յիրանաստան և 'ի Հայս :

Այս թուականնիս կամ ոչ շատ առաջ կամ յետոյ (2000 նխ. զՔրիստոս) գաղութ մը կը մեկնի 'ի Հայոց աշխարհէն և 'ի Լիւդիա կը հաստատուի, ուստի ապա կ'անցնի յԵւրոպիա : Տիւրսենեանք որք հնդեւրոպական գօտւոյ կը վերաբերին և Հայոց մի մասն կը կազմեն, արիական ցեղի սերունդ են :

Թէ ասիական ո՛ր գաւառին վրայ մարդկային առաջին ընկե-րութիւնն խմբեցաւ նախ, և ուստի՛ նախ զառաջինն սկսան այն յաւիտենական Գաղութք (exodes), որոց մի մնացորդն էր Եւրայական ելքն յԵգիպտոսէ, Հնախօսական գիտութիւնք մեզ ըստ բաւականին բացայայտած են :

— Ասիոյ կեդրոնավայրն է տեղին, և անտի կ'ըսկսին Գաղութք : —

Ասիական կեդրոնն՝ կամ լաւ ևս Ասիական կեդրոնէն դէպ 'ի Հնդիկա՝ Հնդկական գիծն՝ սկզբնական քայլ եղած է և քայլա-փոխ Գաղթականութեանց Հնդեւրոպական գօտւոյն : Եւրոպեան և համաշխարհիկ այսօրեայ քաղաքականութեան բարգաւաճումն այս գծին արդիւնքն է :

Հոյն Հնդկաստանի սահմանքն ճշդիւ չեմք գիտեր. « Եօթն գետոց » (Sapta-Sindhou) վերեան բնավայրի նուիրական երկրին հիւսիս-արեւմտեան կողմը հաստատուած արիական արթուն ժողովուրդն՝ առաջին քայլ մ'առնելով դէպ յարեւելք՝ առաջին վա-

բուցանն կը սկսէր փորձել այդ պարարտ կոյս հողին վրայ: Բընակութեան նեկութիւնն, դրացեաց դիմադրութիւնք, բնական կիրք, անժոյժ բնութիւնն, կը մղէ զնոսս վերստին ելք և գաղութ կազմել, երթալ հեռաւոր վայրեր, բնակութիւն, ուտեստ, ընդարձակութիւն, բաւականութիւն խնդրել: Այս գաղութն պատմութեան մէջ Առաջին Ելք Արիակսևնաց համարուած է յոմանց: Ինչք և ստացուածք, անասունք և արջառք, զաւակք և կանայք առջնին ձգելով, կառօք կամ հեծեալ կը մեկնին բնավայրէն և կ'երթան առանձին սահման մը որոշելու: Ի ճանապարհին թշնամեաց յարձակմանց դիմադրելով, մերթ ևս նախապարձակք, մերթ յաղթողք և մերթ պարտեալք, երբեմն ուղին շփոթելով, երբեմն փոփոխելով, և երբեմն յայդ ստիպեալ, կ'անցնին կը հեռանան. և գուցէ առանց մտադրած վայրն տեսնելու այնպիսի վայր մը հաստատուն՝ զոր չէին խորհած: Այս է առհասարակ Գաղթականութեանց և Ելից նկարն. այս դարձեալ գօտեաց կոր և խոտոր ընթացից պատճառն:

Գաղութք իրարու կը յաջորդեն. Արիականաց շատ մի գաղութներէ յետոյ՝ Պրահմայք զվեդեան Հնդկիս կ'ապականեն՝ տիրապետութեան գաղափարաւ: Ի Պարսս Զրադաշտ (Զորո-ասոգր) վերականգնէ զիրանեանս, և մոգք յետ ժամանակաց կը տապալեն այդ դրութիւնն: Եգիպտոս կը սկսի ծաղկիլ՝ իսկոյն Ասիացիք կը յարձակին: Այսպէս շարունակ:

Արիականք դեռ ևս արևմտեան հարաւային Ասիոյ տիրապետած չէին, մինչ հնոյն աշխարհի կեդրոնին վրայ՝ այսինքն է Եւրոպոյ՝ Ասիոյ և Ափրիկէի դրան վրայ, Ասիոյ մէջ բնիկ արիական և ոչ արիական ժողովրդի մը խառնուրդն, քաղաքականութեան՝ հայրենեաց՝ բնակութեան և օրինաց գաղափարապետութիւն մի հաստատած էր: « Ասորեստանեայց թագաւորութիւնն » . Դաշնակցային շահապետութիւն մը: — Ասորեստանեայց սահմանք էին վեր 'ի վերոյ Եփրատ և Տիգրիս, Միջագետաց (հինն Սենաարայ լայնածաւալ ովասիսին) հիւսիսային եզրն, Հայոց աշխարհն, Պարսկաստան և Պարսից ծոցն:

Եփրատէս Եսայեայ գրոց մէջ եգիպտական Նեղոսի հետ բաղդատուելով՝ Մարգարէին աշխոյժ երևակայութեամբն՝ թագաւոր Նեղոսի կը հանդիսանայ, Նեղոսի նման և բիւրապատիկ աւելի յորդ՝ գալարուն և տղմտ, աւերիչ և ապականիչ է մերձաւոր վայրաց քան բեղմնաւորիչ: Բարձր Հայոց կարնոյ շրթունքէն բղխելով՝ Անտիտաւրոսի եղերաց մօտ դէպ 'ի հարաւ շեղելով՝ և մի քանի օժանդակաց ջուրն համբարելով՝ դէպ Ասորուց լեռներն յարեմուտս կը դիմէ, անտի գառնալով յարեմուտս յորդախաղաց կը վազէ դէպ 'ի Պարսկային ծոցն:

Նման Եփրատայ և Տիգրիս Հայոց բնավայրէ ծնունդ առած Տիգրանակերտէն ուղղակի դէպ 'ի հարաւ կ'իջնէ, և Եփրատայ անդուսպ ջուրց հետ խառնուելով՝ կը կազմէ ասորական գետացանցն կամ տելդայն:

Առաջինն նաւարկելի, իսկ Եփրատէս անմատչելի: — Քաղաքացիք՝ Բաբելոնեանք և Նինուէացիք՝ Ասորեստանեայց պետութիւնն կը կազմեն:

Քաղղէացիք Ասորեստանեայց ինքնակալութեան առասպելախառն ծնունդ մի տալով՝ բիւրաւոր դարեր յառաջ կը հռչակեն նորա մեծութիւնն. սակայն հնախօսական գիտութիւնն առ առաւելն Քրիստոսէ 4000 տարի կանխելով կը գտնէ յԱսորեստան Նեբրովթ կամ Բէլ անուն պետն իշխան Բաբելոնի, և իշխանապետ կամ գերիշխան Որեդի (Erech), Աքադի (Accad), Քաղանէի (Chalamé). « յաշխարհին Սենաարայ » որ Ասուրայ հետ կը կուռի, որոյ քաղաքամայրն է Նինուէ, իսկ Ռոբովիս (Resen?), Քաղաք (Kalach) և Գասեմոն քաղաքներն՝ դաշնակիցք ընդ առանձինն թաղաւորք:

Ասորեստանեայց պետութիւնն երեք գլխաւոր հարստութիւնցոյց տուած է, 4000է-ց 538 նիս. զՔրիստոս: — « Առաջին պետութիւն Ասորեստանեայց » Նինուէ մայրաքաղաք (4000-752). — « Երկրորդ պետութիւն » (752-647). — « Երրորդ հարստութիւն քաղղէական — բաբելոնական », (647-538):

Ս. Գրոց խօսքն՝ թէ « Ժողովուրդք եկին յԱրևելից » և Սենաարայ դաշտին մէջ զետեղեցան, կը յիշեցունէ մեզ յառաջ քան զՀնդիկ-Արիականաց Հնդկաստանէ գաղութն՝ այլ ժողովրդրդեան մի Ելքն՝ գալուստն և յարձակումն 'ի Միջագետս, և բնիկ տեղացոց հետ մարտնչելով անդ հաստատուին:

Հնախօսութիւնն Տուրանեան ազգին ելքն և գաղութն կը հաստատէ սոյն պահուն. յորում յայտնի է թէ բնիկք չէին պակասեր յերկրին: Աստի սկիզբն Հին և Նոր Ասորեստանեայց: Այս Տուրանեանք են որ ապա Բակարիոյ Արիականաց դէմ կը պատերազմին և նոցա հետ կը խառնուին. և 'ի Մարս երկարատեն բնակելով՝ Պարթեաց ծնունդ կու տան Արիական և Տուրանեան սերմամբ: (Տես յ. Oppert. Chron. des Assy. et Babyl., L. Batissier. և այլն): —

Այսպէս Պարսից ժողուն՝ Եփրատայ և Տիգրիսի և մինչև Զակրոս լեռանց և Հայոց բնավայրին մէջ՝ պետութիւն մի կը հաստատուէր, բաբելոնական և Միջագետաց ամենաբեր և խաղաղիկ դաշտորէից վրայ: Թորում Նեբրովթ Ասուրի մրցակիցն և հակառակորդ, սորա և արտաքին յարձակմանց և եկող գաղթաւ

կանութեանց դիմադրելու համար՝ կը կազմէր ընդարձակ ինքնակալութիւն կամ շահապետութիւն մը: Գաշնակցութեան մը պետն է Նեբրովթ. մայրաքաղաքն է Բարելոն, Եփրատայ վրայ՝ յարեկս: Առանձին թագաւորներով Գաշնակցութեան քաղաքներն են՝ ՚ի հարաւ, Որէդ (Erech, Archoé, Warkal), Լուսնի քաղաք. յարեկս՝ Աքադ (Accad, Nipour) Աշխարհառեալն (քաղաք), Պարսկային ծոցին վրայ՝ Քաղանէ (Chalamé Térédon) Ոհաննիսի բնակարան. Ուր (Our, Uru) բռնի քաղաք քաղաքական պետութեան: Իսկ Ասուր Նինուէի պետն իւր առանձին գաշնակցութիւնն ունէր, ինչպէս տեսանք:

Քրիստոսէ 2500 տարի առաջ Արիականք կը գաղթեն յԱսուրիս, Արի ազգին բեմն ելած ժամանակն կը համարուի: Ասոնց կը յաջորդէ յեգիպտոս գաղթած Ասիականաց կրկին դարձն, որք եգիպտականացած, հանդարտիկ բնաւորութեամբ կու գան ՚ի Սուրիա և յԱսորեստան, և Եփրատայ հմայիչ հովտաց մէջ կը դադարին:

Եփրատայ և Տիգրիսի տեղւոյից հիւսիսէն մինչև ցՊարսկային ծոց՝ լճացեալ և ճախճախուտ հողն՝ ըստ Chesneyի (Exp. of the Euphr. p. 105) երկուց գետոց տղմէն կազմութիւն առած՝ քաղաքական հողն կը ձևացունէ. մայրաքաղաքն Ուր (Our, Uru):

Այսպէս ուրեմն հայկական բարձր և ցրտադին աշխարհն հիւսիսէն սահմանադիծ դնելով՝ մինչև ՚ի խոնարհն և ճահճայինն Քաղաքաստանի հարաւակողմն, Միջագետք, Բարելաստան և Քաղաքաստան, — Երրեակ Պետութիւնք ինքնուրոյն կը ծաղկին, մինչ ապա Նեբրովթայ օրով կրկին Գաշնակցութեանց կը կապուին « Ստորին և վերին » կամ Բարելոն և Նինուէ:

Հնախոյզք և հնախօսք Երրեակ Պետութիւնքս « Ասիական Եգիպտոս » կը կոչեն, վասն զի երկուքն ալ ջրոց գործն են, այսու եեթ տարբերութեամբ, զի Նեղոսի ձորն առանձնակեաց վայր մ'է, մինչ Միջագետք՝ Եփրատայ և Տիգրիսի ջուրց ծնունդն՝ ճանապարհ էր հասարակաց և դիւրամատչելի վայր: Հիւսիսէն Հայոց լեռների բարձրութիւնքն, որք իբր դիտարան և անառիկ ապաստանարան և յարձակողական դիրք կը ծառայեն. ՚ի հարաւոյ ծովախորշ մ'է խաղաղիկ, իսկ արեւելքէն և մուտքէն կըրկին գետոց ճանապարհն:

Մինչ հնդեւրոպական և սեմական ժողովուրդք գեռ ևս անծանօթ կամ կէս ծանօթ համարուած են հնախօսութեան, Քաղաքաստան, բարելոնական աշխարհ և Նինուէաստան՝ քաղաքակիրթ յառաջդիմութեամբ կը ծաղկին: — « Ասիական ժողովուրդք, կ'ըսէ E. Renan (Mélange p. 8) շատ իսկ կը փայլէին

յայնժամ արուեստներով և յառաջգիմութեամբ » : L. Batissier (Hist. de l'art. mon., p. 41) Ասորեստանի սահմանաց վրայ խօսելով կ'ըսէ. — « Չկայ երկիր մը յորում այնքան նշանաւոր պատերազմունք մըուած՝ և այնքան բազմաթիւ և այլեայլ ազգք տեսնուած լինին ինչպէս աստ » : G. Perrot կը յարէ. (La sculp. Chaldéo-Assyr Bull., de l'assoc. scient., 4 fevr. 1883 p. 272), « Ասորեստան ինքն իրեն բան մը ստեղծած չէ. իւր կրօնք, գիտութիւնք և արուեստք՝ 'ի հարաւոյ (Քաղզէաստան) քաղուած են : Ասորեստան պատերազմի դաշտ է. վառեալ բանակ մ'է » :

Մինչ այսպէս Ասիոյ մի մասն Հայոց սահմանակից մի կողմէ քաղաքակրթութեան և յառաջգիմութեան կեդրոն կը տեսնեմք, և միւս կողմէ գաղթականութեանց և յարձակմանց ենթակայ բաց դաշտ մը, Հայոց բնավայրն ակնատես դրացի այս ամեն անցից միայն գիտող չէր կրնար ըլլալ, յայտնի է որ նոյն ազգեցութեանց մերթ ևս գէթ հազորակից : Այս իբր սկզբունք :

Մինչ Հնդկական թերակղզոյն հիւսիսային արևմտեան Արիականք կամ Արիք՝ առաջնորդութեամբ իրենց « Պեա » երու (Pati) կը գիմեն գէպ յարեերս Գանգեսի, և ապագայ գաղթականութեան կը պատրաստուին, Հնդկաստանի և Ասորեստանի մէջ գտնուած լայնածաւալ իրանեան աշխարհն, « Որմզդի նուիրական հողն » բնական սահմանօք պարսպեալ կը սկսի ծաղկիլ. յարեելից՝ Հնդկաստան յարեմտից Եփրատ և Տիգրիս, հիւսիսէն՝ կաւկաս լեռներն, կասպեան ծովն : Հնդիկ կաւկաս (Hindou Kousch), հարաւէն՝ Պարսից ծով, (Տես C. Knight; A. Stuart, Les traces du chem. de fer cent. asiat. p. 14), — իրանի հիւսիսային սահմանակիցն է Տուրան : —

Հնդկական մեծութիւնն կ'ընծայէ մեզ Ռիգ վեդա (Rig-Vêda) սուրբ գիրքն. իրանեան վեհութիւնն՝ գջեկն-Աշեստա զանգիկ գիրքն, Գեկիմազդեզն (Zend-Avesta) անմահ գիրքն :

Հնախօսք իրանեան անուան ծագումն կու տան Արիական անունէ, (Aryana-Vaêja). որոյ ազաւազմունք են կամ փոփոխութիւնք Eriéné, Eirieno, Aïrieno Aïriano, Iraniana, որ 'ի յետոյ փոխեցաւ 'ի Ֆարս կամ Պարս. (տես Champollion Figeac, la Perse, p. 26 : C. de Harlez, les Aryas et leur première patrie p. 24-25) :

Իրանեան կամ Երանական Գաղութներու մէջ գլխաւորն է Զանգիկ գրոց « Աստուածասուր » = « Dêvadata-Պիւատուր » = գրոց մէջ յիշուածն՝ Ընդ գնացս արևու, զոր C. de Harlez (Les Aryas p. 15) կը մեկնէ « Dans le sens de la route que parcourt le soleil, c'est-à-dire de l'est à l'ouest ».

Իրանեան Սրբավայրի գրացի և սահմանակից է Հայոց աշ-

խարհն Քրիստոսէ 3000 տարի առաջ. այսպէս յայտնապէս կ'ե-  
րևի սահմաններէն, և այս սահմանակցութիւնն միայն արդէն  
իսկ բաւական է հաւաստելու այս կրկին երկրաց փոփոխակի  
գաղթականութիւնքն:

Ինչ որ ալ լինի Հնախօսից կարծիքն մեր բնաշխարհին վրայ՝  
սակայն այսչափն ստոյգ է՝ որ կրկին բարգաւաճ ընկերութեանց  
կեդրոնն գտնուած է. և եթէ նոցա հետ ընկերակցած չէ՝ որ  
բացարձակ սխալ և անհնարին ենթադրութիւն մ'է, գէթ նոցա  
ազդեցութենէ զուրկ մնացած չէ:

Հայ աշխարհ Հնդիկ-Արիականաց Գաղութն ողջունելէ առաջ  
և շատ առաջ ուրոյն և առանձին Ազգախմբոց բնակարան եղած  
է. և յատուկ սերունդ մը պատասպարուած է այդ վէտ վէտ ցա-  
մաքային ալեաց վրայ և ծմականիստ հովտաց մէջ. մինչև ցայս-  
օր հարեանցի քննուած սերունդ մը, վեր 'ի վերոյ տեսնուած  
ազգատոհմ մը. որ ասիական անհանդարտ բնութեան՝ և արիա-  
կան վսեմ արեան յորդութեան բերմամբ՝ մերթ ցեղ ցեղ գաղ-  
թականներ յղած է սատ և անդ, ինչպէս Տիւրսենեան, և այլն,  
և ինքն ևս ընդունելու պատրաստ գտնուած. մերթ բռնութեամբ  
ստիպուած, և երբեմն հանդարտիկ հիւրընկալած և ընդունած  
է, զուգեր և զուգուեր է նոցա հետ իւր բարքն և բարբառն,  
իւր սովորոյթքն և լեզուն, Հնախօսականն պէտք է վարդապետէ,  
և նմա անկ է մեր աչաց առաջ պարզել այս անցեալ եղելու  
թիւնքն և յիշատակքն:

Հնախօսական նորագոյն կարծիքն հաստատապէս կ'ուզէ վար-  
դապետել՝ թէ Արիք կամ Արիական մայր ցեղն՝ նախապատմա-  
կան ժամանակաց մէջ երկու բաժնուած լինի. մին դէպ յԵւ-  
րոպիա անցնելով և միւսն դէպ յԻրանս կամ յԱրիաստան դի-  
մելով: Իրանեան Արիք դարձեալ կրկին մասանց վերածուեր  
են, Պարսիկք՝ Մարք՝ Բակտրիականք, և նախկին-Հնդիկք, որք  
Արիական անունն պահելով Աքսոս և Յաքսարտ գետոց մէջ բը-  
նակած լինին. աստի նոր հատուած մը անցնելով Հնդիկ-կաւ-  
կասն՝ դէպ 'ի հարաւ յարձակած և հիւսիսային արեւմտեան  
մասին ընկիքն նուաճած լինի, իսկ մնացորդք կասպից ծովու և  
Տիգրիսի մէջ գտնուած աշխարհն՝ և Պարսից և Մարաց լեռ-  
ներու մէջ բնակած ըլլան, Քրիստոսէ առ նուազն 2500 տարի  
առաջ: (Տես M. Fontane, Inde. Védique, p. 100): —

Եւ արդեօք այս հնախօսական գաղափարն 'ի նպաստ մեզ  
չեմք կրնար գործածել. Արիական մայր ցեղին կեդրոնն և բը-  
նավայրն և բաժանանց կէտն ենթադրելով ընդարձակ սահ,

մանաւ՝ Եւքսինեան Պոնտոսի արևելեան մի մասն և Կաւկաս լեռնեան հիւսիսէն, արևմուտքէն Կապադովկիա և Տաւրոս, հարաւէն՝ Միջագետք, արևելքէն Կասպից ծովն, Պորճ և Զաղրոս լեռինք, (El Bourz, Zagros): Ուսկից առաջին յարձակողական գաղութն կ'ըսկսի. մին գէպ յԵւրոպիա, և միւսն գէպ յերկրորդ Արիաստան (Իրանաստան), Իրանեան Արիք վերստին կը հատուածին. այդ խմբերէն մին անցնելով Հնդիկ-Կաւկասն՝ (Hindou-Kousch), մտեր է Եօթն-Գետոց (Sapta-Sindhou) սրբավայրն, նուաճեր և ընկճեր է Հնդկաստանի բնիկ ժողովուրդն. իսկ միւսն Կասպից ծովուն և Տիգրիսի մէջ հաստատուեր է: Մարաց և Պարսից լեռանց վրայ դադարելով:

Փաստ մ'աւելի Հնդեւրոպական լեզուին գծած գօտւոյն ընթացքն է, որ ըստ ամենայնի մեր վարդապետութեան կը համապատասխանէ: Եւ նոյն իսկ Տուրանեանց Մարաց և Պարթևաց բարբառոյն արիական և հայ լեզուի հետ ունեցած նմանութիւնք՝ զօրացուցիչ փաստք են այս ենթադրութեան:

Ունիւք 'ի նախնեաց շատ բառերու հետ նաև Արի և Անարի բառերն, զորս Պարսիկն և Հայ հաւասարապէս կը գործածէին: Որ որ Հայ ծնունդ էր կամ Պարսիկ՝ Արի էր, և որ որ այլասեռ՝ Անարի: — Այս երկու ազգք՝ արիական սերմ էին հաւասար, թէ և ժամանակաւ ըստ գաղափարաց փոխուեցաւ և գործածութեան իմաստն: — Արի (Aria, Aryas) բառն՝ որով Եօթն-Գետոց վեղեանք (Veda-) յորջորջէին՝ Ազնուական, բարձր, արի, քաջ, կը նշանակէ, բայց արութիւն բաղդատական է. մինչև 'ի Հնդկաստան գաղթելն Արեաց՝ գուցէ և անուննին այլապէս կը լսուէր: (Տես Max-Müller, Essais, p. 376):

Այսպէս Հայոց բնավայրն նախապատմական դարուց մէջ՝ Բնիկ Արիաստան կ'երևի, կեդրոն և կէտ բաժանմանց և հատուածոց Արեաց. սահման ունենալով հիւսիսէն՝ Կաւկաս և Եւքսինեան Պոնտոսի մի մասն, արևմուտքէն՝ Եփրատ գետ և Անտիտաւրոս, հարաւէն՝ Միջագետք և Ասորեստան, արևելքէն Կասպք և Պարսք: — Այս հողէն նախ սկսան Արիական գաղութքն, Քրիստոսէ բազմաթիւ գարեր յառաջ գէպ յարևելս և յարևմուտք: Իսկ գալով պատմական ժամանակին՝ ինչպէս տեսանք նիս. զՔրիստոս. 4000է-ց2500 Ասորեստանեայց պետութիւնն կը ծաղկի Հայ բնավայրին ոտից քով, Նեբրովթի ժամանակ: Իսկ 2500ին կամ 3000ին՝ այսինքն 30է-ց25 գարեր յառաջ քան զՓրկչի թուականն՝ մինչ Արիական ազգն 'ի Հընդիկս յարձակումներով և գաղթականութեամբ կ'ըզբաղէր, Իրանեան կամ Արիական պետութիւնն կը փայլէր մեզ մտ: Քիչ

յետոյ դարձեալ հատուածոց շարժումն կ'ըստի, յորս դիտելի է Հնդիկ-Արիականաց վերստին դարձն յարեմուտս :

Այս ընդհանուր տեսութեամբ աս եզրակացութեան կրնամք յանգիլ :

Ա. թէ Հայ աշխարհն՝ Բնիկ-Արիաստան՝ Մայր է և ծնող Արիական սեռի, և թէ Տիւրսենեան Ետրուակացիներէ զատ՝ շատ մի հատուածներ յղած է աստ և անդ :

Բ. թէ Հայն՝ Արիականաց կրկին դարձն՝ և մերձակայ այլա-սեռ դրացի ազգաց Գաղութներ ընդունած է յինքն, և ձուլած և ձուլուած :

Գ. Գրացեաց վրայ անձամբ և հեռուորաց վրայ գաղթա-կաններով ազդած է, և ինքն 'ի նոցանէ աղղեցութիւն կրած, թէ լեզուով՝ թէ բարքով, թէ պաշտամամբ : —

Եւրոպեան հնախօսութիւնն այսօր պատկառանք կը դիտէ Եւրասիանեան Պոնտոսի և Կապասի, Եփրատայ և Անտիտարոսի, Միջագետաց, Կասպից ծովուն և Իրանաստանի մէջ գտնուած աշխարհն, Հայոց Բնավայրն : Որոյ համար Սոփուա Բուզգէ իւր վերջին թղթովն՝ (Հանդէս Ամսօր. 1892 թիւ 5), կ'ըսէ « Ետ- » բուսկերենի պատճառաւ ուրիշ հետազօտութեանց դրդուեցայ, » որոնք՝ ինչպէս կը յուսամ, Հայ ազգին և իւր ամենամերձաւոր » ցեղակից ազգաց հնագոյն նախապատմական ժամանակի պատ- » մուտքեան նկատմամբ մեծ նշանակութիւն պիտի ունենան » : « Կը հարտարտեմ որ Հայք Եւրոպիոյ ամենէն առաջին քաղա- » քակիրթ ազգն եղած են » : ..... « և զայս (վերոյիշեալքն) » ընդհուպ պիտի ապացուցանեմ » : —

Ո'րչափ լոյս համաշխարհիկ գիտութեանց և փառք Հայու-թեան կը յուսամք վստահաբար թէ պիտի սփռի՝ եթէ այս ա-մենն և մանաւանդ տոսպական (Vannique) սեպագիրք ուղիղ ընթերցմամբ պարզուին : Որոյ յուսալիւր աւետիան տուաւ մեզ յանցեղումն Աւետարերն Հանդէս Ամսօրեայ : —

Սակաւ մի յառաջ այս երեք եզրակացութեանց յանդեցանք, այսինքն թէ հայք Մայր են և ծնող Արիական սեռի և զանազան Գաղութներու . և հիւրընկալ և ընդունող հատուածոց, ազգելով և աղղեցութիւն կրելով 'ի նոցանէ : — Երեքն 'ի մի ամփոփելով կը հետեցունեմք՝ թէ Հայոց Բնավայրն վերոգրեալ սահմաննե-րով արիական համաշխարհիկ ժողովրդոց առաջեւ հաստատուն բնակութիւններէն՝ և երիցագոյններէն մին է . աստի զանազան գաղթականութիւններ ծնած և սփռուած են յարեմուտք և յա-րեւելք, ոմանք վերստին դարձած են, իրենց հետ բերելով նո-

րանոր գաղափար և սովորոյթք. և շատ արտաքին ազգեր ալ գաղթած են անդ, ձուլած և ձուլուած են իրարու հետ, խառնուած. և լեզուով ու բարբոյլ ու պաշտամամբ իրարու մէջ հալած են: — Այս ամենն կը հաստատեն թէ օտար և թէ մեր բնիկ պատմագիրք, օտար և բնիկ հնախօսութիւնք, հին արձանագրութիւնք, և այլն, և այլն: — Տիրսնեան գաղթականութեան ելքն 'ի Հայոց տեսնք վեր 'ի վերոյ. և սակայն դեռ ևս քանինե՛ր:

Հին արձանագրութիւնք և հնախօսական հետազօտութեան արդիւնք՝ մեր աստուածոց նուիրական չարքին մէջ կը բազմեցունեն խաչոյի կամ Հաչոյի աստուածուհին. (Journ. Asiaticque. 1863, janv-fevr.) դարձեալ (Երկրագունդ հանդէս 1886 յուլ. Մ. Չ. Աշրուդ-Տարկայի սեպ. արձան.): Քաղղէաստան ուստի միայն գիտութիւնք եւ արուեստք մտած են յԱսորեստան, ինչպէս տեսնք, նոյն աստուածուհին կը պաշտէր, և մանաւանդ թէ ինչ տարբերութիւն կայ Քաչոյէ, Քաչոյի, Քաչոյի, իւաչոյի և Հաչոյի անուանց մէջ. (Տես Պատկեր Հանդէս. Ակնարկ հայ աթուր. Ս. վ. Նազարէթ 1892 Մայ. 1, էջ 38, 40): — Քաղղէացիք կամ գաղթականութիւն մ'ունեցած են դէպ 'ի հիւսիս 'ի Հայս, և ձուլուած մեզ հետ, մեր բնավայրի Մոկաց գաւառէն անցած և դէպ 'ի հիւսիս դիմելով՝ հաստատուած, և կամ ինչ որ աւելի հաւանական է և մանաւանդ թէ զուտ ճըմարտութիւն և անհակառակելի ստուգութիւն՝ 'ի Հայոց աշխարհէ գաղթականութիւն մը՝ Ասորեստանեայց պետութեան կազմութենէ շատ դարեր յառաջ դէպ 'ի հարաւ դիմած է 'ի Միջագետս, և Բաբելոնի և Նինուէի շինութենէն առաջ՝ մինչդեռ Քաղղէաստանի հողն ճահճային և անբնակելի վայր մ'էր, Տիգրիսի և Եփրատայ առաջին գետախառնուրդն անցնելով, և տեղացի բնիկներու յաղթելով՝ ոչ-արիական ժողովրդի, առաջին գետին վրայ՝ ապագայ Բաբելոնի նոյն աստիճանաւն դէպ յերս արևու Աքադ քաղաքն կը կանգնէ, շրջակայից կը տիրապետէ, և հոն ծնունդ կու տայ Աքադեան անուանակոչութեան Քաղղէական ազգին, որոց ձեռքը Ասորեստանի հզօր պետութիւնն կը բարձրանայ գիտութեան և արուեստից լուսով յապագային, և որոց ազդեցութեամբ բոլոր Միջագետք կոչուած են երբեմն Քաղղէաստան:

Շարունակելի

